

» լիութի՛ն ներքոյ խորանին և էր մնացեալ ամբողջ իբրև զկենդանի զոր տեսեալ
 » ոչ մերձեցան այլ կրկին ծածկեալ ամրացուցին . և է անդ ՚ի տեղին որ կոչի
 » Այվասիլ » :

ԱՂԲԻԻՐ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ . — Ժամաւ միով հեռի ՚ի քաղաքէն ՚ի վերայ ճանապարհին
 ՚ի ձախմէ գոյ աղբիւր ինքնաբուխ ՚ի կողաց լերին , ՚ի մէջ փոքր քարայրի . անդ
 գտեալ ասի գլուխ Ոսկեքերանի . և է տեղին յաճախեալ յուխտաւորաց :

ՄԻՀՐԳԱՏԱՅ ԶՐԱՆՑԳՆ . — Ոչ սակաւ զարմանաց արժանի է և չրանցքն Միհրյաւ .
 տայ ժամաւ միով հեռի յաղբերէն Ոսկեքերանի ըստ ձախմէ ճանապարհին . և
 է առու լայն կռանահարեալ զերեսօք ապառաժ լերին մարգաշափ բարձր յեր-
 կրէ . տեւեալ երկայնութեան նորա աւելի քան զկէս ժամ ոչ ուղիղ գծիւք , այլ
 խոտորնակի որպէս ինչ գիւրք լերինն հանդիպեալ են . սակայն յաւերակս համա-
 րեալ է արդ : Զսա տաճիկք Ֆէհրաւտ եւափոռսոռ կոչեն , որ այն ինքն է Միհրդատ :
 Եւ առասպելեն ռամիկք այսպէս , եթէ Ֆէհրատդ այդ այր հուժկու եղեալ տար .
 փացեալ է դստեր թագաւորի ուրուք . և ՚ի խնդրել զնա իւր կնութեան , ձեռն
 արկանէ շինել զջրանցսդ ըստ խնդրոյ թագաւորին փոխանակ դստեր նորա . այլ
 յետ շինութեանն ժխտէ թագաւորն զխոստումն իւր , և Ֆէհրատ առ դառնու-
 թեան սրտին զնիգ երկաթի քարահատացն ՚ի վեր արձակեալ մեռանի ՚ի ներքոյ
 նորա : Այսպիսի ինչ պատմի յաւանդութենէ և զշինողէ Տէլիքի դաշին ՚ի Տրա-
 պիզոն :

Ա Ղ Ա Ի Ն Ի

ԺԱ

Օրսոյի քունը չտարաւ մէկէն , անոր
 համար երկրորդ առաւօտը շատ ուշ ար-
 թընցաւ : Անկողնէն ելածին պէս՝ առջի
 բանը իր թշնամեաց տունն աչքին հան-
 դիպեցաւ և անոնց պատուհաններուն
 նեղ ծակերը : Վար իջաւ , հարցուց քը-
 րոջն ուր ըլլալը : — Խոհանոցն է , պա-
 տասխանեց Սալէրիա անուն աղախի-
 նը , գնտակ կը ձուլէ : Այսպէս կռուոյ
 և պատերազմի գաղափար կ'ելլէր միշտ
 Օրսոյի առջև :

Աղաւնի աթոռակի մը վրայ նստած
 էր , առջևը շատ մը նոր թափած կա-
 պարեայ գնտակներ , որոնց աւելորդ
 ծայրերը կը կտրէր :

— Ի՞նչ բանի ետեւէ ինկեր ես , հար-
 ցուց Օրսոյ :

— Տեսայ որ հազարապետին հրացա-
 նին համար գնտակ չունիս , պատասխա-
 նեց քոյրն անոյշ ձայնիւ , կաղապար մը

գտայ ու մինչև իրիկուն քսանը չորս լուց-
 կի (գզ. Cartouche) պիտի պատրաս-
 տեմ քեզի , եղբայր :

— Փառք Աստուծոյ պէտք չունիմ :

— Առանց պաշարի կենալու չէ , Օրս՝
 Անտոն . մոռցեր ես երկիրդ և քաղա-
 քակիցքդ :

— Թէ որ մոռցած ալ ըլլայի , մէ-
 կէն միտքս բերած կ'ըլլայիր դու : Կ'ու-
 զէի իմանալ թէ քանի մը օր առաջ մեծ
 սնտուկ մը հասաւ հոս :

— Այո , եղբայր . կ'ուզեմ խուցդ տա-
 նիմ :

— Դո՛ւ տանիս . անիկայ վերցընելը
 քու բանդ չէ . . . Մարդ մը չկայ հոս որ
 խուցս բերէ զանիկայ :

— Կարծածիդ չափ տկար չեմ , պա-
 տասխանեց Աղաւնի՝ բազուկները ցու-
 ցընելով : Քեզ տեսնամ Սալէրիա , ը-
 սաւ աղախնոյն , օգնէ ինձի :

Եւ սկսաւ ինքիրեն վերցընել բոլոր
 սնտուկին ծանրութիւնը . բայց Օրսոյ
 աճապարեց ու օգնեց :

— Աս սնտուկին մէջ քեզի համար

ալ բաներ կան սիրելի Աղաւնիս, զուր-
ցեց Օրսոյ: Չես մեղադրեր անշուշտ աղ-
քասօրէն ընծաներ բերելուս. որովհե-
տե կէս թոշակով պաշտօնակալի մը
քսակը շատ լեցուն չկրնար ըլլալ:

Ըսաւ և անտուկէն զգեստներ հա-
նեց, շալ մը և ուրիշ աղջկան վերա-
բերեալ բաներ:

— Ի՛նչ աղուոր զգեստներ, աղաղա-
կեց Աղաւնի. մէկէն բալլիքի տակ կըղ-
պեմ որ չաւրուին: Հարսնիքիս համար
կը պահեմ զատկը, ըսաւ տխուր ժպի-
տով մը, որովհետեւ հիմա սուգի մէջ
եմ:

Եւ եղբօրը ձեռքը պագաւ:

— Արուեստակեալ բան մըն է, քոյր
իմ, այսչափ երկար ատեն սուգ բռնելը:

— Երգուընցեր եմ, ըսաւ Աղաւնի
հաստատութեամբ, սուգի զգեստները
չթողլու... Եւ պատուհանէն Պարրի-
չինիններուն տունը կը նայէր:

— Սուգի զգեստները չթողլու՝ մինչեւ
որ չկարգուիս, անանկ չէ:

— Ես այն մարդուն հետ միայն կը
կարգուիմ, որ իրեք բան պէտք է ըրած
ըլլայ... Եւ դարձեալ ձախողակ նա-
յուածքով մը թշնամեաց տան վրայ կը
տնկէր աչքը:

— Գեղեցիկ ես. կը զարմանամ ին-
չուան հիմա չկարգուելուդ վրայ: Չկայ
գրեզ ուզող մը:

— Ո՛վ կ'ուզէ խեղճ որք աղջիկ մը...
Ասկէց զատ՝ ան մարդն որ իմ սուգի ըզ-
գեստներս հանել պիտի տայ, պէտք է
որ զիմացի տան կնիկները սգաւոր ընէ:

— Քոյրս խենթեցած է, ըսաւ ինքնի-
րեն Օրսոյ. և խօսակցութիւնը չտաքցը-
նելու համար՝ պատասխան չտուաւ Ա-
ղաւնիի:

— Եղբայր իմ, զուրցեց Աղաւնի, ես
ալ քեզի ընծայ պատրաստած եմ: Բե-
րած զգեստներդ՝ հոստեղի համար չա-
փազանց գեղեցիկ են. վրայի աղուոր
հագուստդ երկու օրուան մէջ կտոր կը-
տոր կ'ըլլայ, թէ որ անով մնաքիին մէջ
մտնես: Եւ գորոց մը բանալով, որսոր-
դի ամբողջ հագուստ մը դուրս հանեց,
զոր ինքը ձեռքովը շինած էր. և հագուց

Որսոյի այդ թաւիչէ կանաչադոյն զգես-
տը, որ ետեի կողմէն մեծ գրպան մը
ունէր. դուխն ալ սեւ թաւիչէ սրա-
ծայր գլխարկ մը դրաւ՝ մետաքսով ասղ-
նեգործած և ծայրը ծոպով զարդա-
րուած:

— Այս ալ հօրերնուս գօտին¹ է. իր
դանակը զգեստիդ գրպանին մէջն է.
երթամ բերեմ իր ատրճանակն ալ:

— Աւազակի կերպարանք առի՛ ըսաւ
Օրսոյ աղախնոյն, պզտի հայլիի մը մէջ
ինքզինքը նայելով:

Օրսոյ աս նոր զգեստով նախաճա-
շիկն ըրաւ, և ուտելու միջոցին ըսաւ.
քրոջն որ իր անտուկին մէջ քանի մը
հատոր գրքեր կային. և թէ ուրիշ գրք-
քեր ալ պիտի բերել տար Գաղղիայէն
ու խտալիայէն՝ որպէս զի քոյրը հար-
կաւոր եղած բաները սորվի:

— Իրաւունք ունիս, եղբայր իմ, պա-
տասխանեց Աղաւնի. ես ալ գիտեմ որ
շատ բանի գիտութիւն կը պակսի ին-
ծի. և սիրով պատրաստ եմ սորվելու՝
մանաւանդ թէ որ դու ինծի սորվեցը-
նես:

Քանի մը օր անցաւ և Աղաւնի բնաւ
Պարրիչինիններուն անունը բերանը չէր
առներ: Օր մը նախաճաշիկէն վերջը,
փոխանակ գիրք ու թուղթ բերելու՝ որ-
պէս զի իրենց սովորական կրթութիւն
ներն ընեն, մէհհարուն գլուխն առած՝
— Եղբայր իմ, խնդրեմ մէկտեղ դուրս
ելլենք, ըսաւ: Աղաւնիի գէմքն աս ան-
գամ սովորականէն աւելի լուրջ էր:

— Ո՛ւր կ'ուզես որ ընկերեմ հետդ:

— Ա՛ռ հրացանդ մէկտեղ և վառօդ
ալ: Մարդ մը առանց զէնքի պէտք չէ
դուրս ելլէ:

— Այլէկ, աղէկ. սովորութեան հե-
տեմք: Ո՛ւր կ'երթանք:

Աղաւնի պատասխան չտուաւ, պա-
հապան շունը կանչեց ու եղբօրը հետ
դուրս ելաւ: Արագ արագ քալելով գե-
ղէն հեռացաւ, և խոր ճամբայ մը բռն-
նեց՝ որ օձապտոյտ կը քալէր այգիներ.

¹ Այս գօտին գարգէրս կը կոչեն գորսիգացիք
և կը ծառայէ լուցկի գնելու մէջը, անոր ձախ կող-
մը ատրճանակ մը կը գնեն:

րուն մէջ. առջեւն շունը կը քայլընէր, որուն նշան մը բրաւ, և կենդանին հասկընալով զայն՝ սկսաւ ասդիս անդին վազել այգիներուն մէջ մէյ մը ասդի կողմը մէյ մը անդի, և երբեմն կանկ կ'առնէր ճամբուն վրայ և պոչը շարժելով իր տիրուհւոյն կը նայէր:

— Թէ որ Մուսկէդոն հաջէ, ըսաւ Աղաւնի, լեցուր հրացանդ՝ եղբայր, և անշարժ կեցիր տեղդ:

Գեղէն կէս մղոն հեռու, խել մը չըջաններէ վերջը Աղաւնի կանկ առաւ տեղ մը ուր ճամբան անկիւն կը ձևացընէր: Հոն պզտիկ բուրդ մը ձևացած էր թարմ և թոռմած ճիւղերէ, որոնք իրարու վրայ դիզուած էին իրեք ոտք բարձրութեամբ. և մէջէն սե խաչի մը ծայրը դուրս ելած էր: Գորսիգայի շատ կողմերը, մանաւանդ լեռներուն մէջ, աստիկ հին սովորութիւն մը կայ՝ որ անցաւորք քար մը կամ ծառի ճիւղ մը կը նետեն ան տեղոյն վրայ՝ ուր մէկն անընական մահուամբ մեռած է: Քանի որ մեռելոյն բռնական մահն իր հայրենակցաց մտքէն ելած չէ, այս նուէրն օրէ օր կը դիզուի կը բարձրանայ:

Աղաւնի մաթուզենուոյ (ՏՃ. Հօճու եւմիլի աղաձը) ճիւղ մը կտրելով՝ բուրդին վրայ աւելցուց: — Օրսոյ, ըսաւ, հոս մեռաւ հայրերնիս: Աղօթենք հողոյն համար, եղբայր իմ: Եւ ծունկ չոքեցաւ. եղբայրն ալ մէկտեղ: Նոյն միջոցին գեղին ժամուն զանգակը սկսաւ ծանր ծանր հնչել, որովհետեւ նոյն գիշերը մէկը մեռեր էր: Օրսոյ յորդու թեամբ լացաւ:

Քանի մը վայրկեանէն Աղաւնի ոտք ելաւ՝ աչքերը չոր, բայց դէմքը կրակոտ. ոճապարելով մը բուրժ մատովը երեսը խաչ հանեց, որ Գորսիգացուոյ մէջ մեծ երգման նշանակ է, ետքը եղբորը հետ գեղ դարձաւ: Լռութեամբ տուն մտան. և Օրսոյ իր սենեակը գնաց: Քիչ մը ետքը Աղաւնի ներս մտաւ, ձեռքը պզտիկ արկղիկ մը՝ զոր ստոյին վրայ դրաւ. և մէջէն շապիկ մը դուրս հանեց՝ որ արեամբ ուռցած էր ասդիս անդին: — Ահաւասիկ հօրդ շապիկը, Օրսոյ, ը-

սաւ և անոր ծնկուրներուն վրայ նետեց զայն: — Ահաւասիկ զինքը սպաննող կապարը. և երկու ժանգահար գնաւ. կիկ դրաւ շապիկն վրայ: — Օրսոյ, եղբայր իմ, աղաղակեց անոր գիրկը վազելով և ուժգին սխմելով. Օրսոյ, դու իրեն վրէժը պիտի առնուա: Եւ մոլեգին եռանդեամբ մը պազաւ եղբայրը, պազաւ կապարներն ու շապիկը, և սինեկէն դուրս ելաւ՝ ուր քարացած թողուց զեղբայրը:

Օրսոյ անշարժ կեցաւ կտոր մը աւտին, չհամարձակելով հեռացընել իր մէն այս ահաւոր նշխարները: Ետքը ինքը իրեն ոյժ տալով՝ նորէն արկղիկին մէջ դրաւ զանոնք և սենեկին միւս ծայրը վազեց անկողնին մէջ նետուելու, գլուխը պատին դարձուցած և բարձր գլուխը քաշած, իրիկ թէ ուրուականի մը երևոյթէն կ'ուզէր փախչել: Քրոջը վերջին խօսքերն անդադար ականջին մէջ կը հնչէին, և կարծես թէ մահադուշակ ու անխուսափելի պատգամ մը կը լսէր, որ արիւն կ'ուզէր իրմէ և անմեղ արիւն: Չեմ ուզեր նկարագրել զըժբաղդ երիտասարդին զգացմունքները, որ խառն՝ ի խուռն կը պտրտէին իր գլխուռն մէջ ինչպէս որ խենթերուն կը հանդիպի: Երկար ատեն նոյն զըքով կեցաւ, առանց համարձակելու գլուխը դարձնել: Հուսկ ուրեմն ելաւ անկողնէն, փակեց արկղիկն և աճապարելով տնէն դուրս ելաւ, դաշտերուն մէջ թափառելով՝ առանց զիտնալու թէ ուր կ'երթար:

Կամաց կամաց բաց օդը սիրտը բացաւ, և քիչ մը աւելի հանդարտելով՝ կըցածին չափ պուղ արեամբ մտածեց իր վիճակն և թէ ինչպէս կրնար անկից ելլել: Ամենին մարդասպանութեան կասկած չունէր Պարրիշիններուն վրայ, ինչպէս որ ուրիշ անգամ ըսինք. բայց Ակոսդինի նամակն հնարողը գիրենք կը սեպէր, և միտքը դրած էր որ այս նամակը իր հօրը մահուան պատճառն եղած էր: Սակայն գիտէր որ այս խարդախութեան համար բան մը չէր կրնար ընել. երբեմն իր երկրին նախապաշար-

մունքներովն ու բնածին ազգամայրը միտքը գրաւած՝ գաղտուկ վրէժխնդրութիւն մը ճամբու մը վրայ դիւրին կը տեսնուէր աչքին, բայց մէկէն կը վառնաւ տէր մտքէն սոսկումով այս մտածութիւնը։ Ետքը քրոջը յանդիմանութիւնները միտքը կու գային, և կերպով մը սրտէն իրաւունք ալ կու տար անոնց։ Այսպէս խղճմտանքին և նախապաշարմունքներուն հետ միակերպ պատերազմելով՝ վերջապէս ճար մը գտաւ, որ պատճառանքով մը վէճ բանայ փաստաբանին մէկ տղուն հետ ու մենամարտի։ Եւ միտքը համոզուելով այս գիտին, սկսաւ գործադրութեան կերպերը մտածել. ասանկով սիրտը մեծ բեռէ մը խալըսեցաւ։

Ճամբէն ետ դարձաւ ու դէպ'ի գեղը կու գար, ուսկից շատ հեռացեր էր առանց անդրադառնալու. յանկարծ պղտիկ աղջկան մը երգելու ձայնը լսեց, որ մաքիին ծայրը ճամբու մը վրայ նշատած էր։ Երգը ծանր ու միակերպ եղանակ մըն էր՝ գերեզմանական ողբերու սահմանուած. այսպէս կ'երգէր աղջիկը. « Որդւոյս, որ հեռաւոր աշխարհքէ, պահեցէք որդւոյս իմ խաչս ու արիւնոտդ շապիկս... »

— Ի՞նչ է երգածդ, հարցուց Օրսոյ բարկութեամբ՝ յանկարծակի երևնալով։

— Դու ես, Օրս' Անտոն, ըսաւ աղջիկը վախցած... Աղաւնիի շինած մէկ երգն է։

— Կ'արգիլեմ որ մէյ մ'ալ չերգես, զուրցեց Օրսոյ ահաւոր ձայնով։

Աղջիկը դուին ասդիս անդին դարձուց, կարծես թէ կը նայէր թէ ո՞ր կողմէն կրնար փախչիլ. և անտարակոյս փախած կ'ըլլար, թէ որ մեծ ծրարի մը պահպանութիւնը չունենար, որ գետնին վրայ էր։

Օրսոյ ամբշտաւ իր բարկութեանը վերայ. և ձայնը քաղցրացընելով՝

— Ի՞նչ ունիս՝ աղջիկս, այդ ծրարին մէջ, հարցուց։

Տեսնելով որ ֆիլինա կ'ուշացընէր պատասխան տալու, բացաւ ծրարն և

տեսաւ որ հաց մը և ուրիշ պաշարներ կային մէջը։

— Որո՞նք կը տանիս այս հացը։

— Արդէն գիտես. հօրեղբօրս։

— Հօրեղբայրդ աւազակ չէ։

— Այո։

— Թէ որ պահպանութեան զինուորները հանդիպին քեզի և հարցընեն թէ ո՞ր կ'երթաս...

— Կ'ըսեմ իրենց, պատասխանեց աղջիկն անխռով, որ մաքին կտրող Լուգ գացիներուն ուտելիք կը տանիմ։

— Հապա թէ որ անօթի որսորդ մը դիմացդ ելլէ և ձեռքէդ պաշարներդ առնէ...

— Ոչ դժ կրնայ համարձակիլ. կ'ըսեմ թէ հօրեղբօրս համար է։

— Իրօք անանկ մարդ չէ որ իր կերակուրն ուրիշներուն ձեռքը թողու...։ Շատ կը սիրէ զքեզ հօրեղբայրդ։

— Շատ կը սիրէ, Օրս' Անտոն. հօրս մահունէն վերջը՝ ինքը կը հողայ մայրս, զիս ու պզտի քոյրս։ Քանի որ մայրս հիւանդ չէր, հարուստներուն կը յանձնէր զինքը որ աշխատութիւն տան իրեն։ Գեղապետն ամէն տարի զգեստ մը կու տայ ինծի, և ժողովրդապետը քրիստոնէական և կարդալ կը սորվեցընէ ինծի. ասոնց պատճառը հօրեղբայրս է։ Բայց ամենէն աւելի քոյրդ կը խնամէ զմեզ։

Նոյն վայրկենին ճամբուն վրայ շուն մը երեցաւ. աղջիկն երկու մատը բերնին վրայ դնելով՝ սուր մը սուլեց. մէկէն շունը քովը մօտեցաւ քծնելով, ետքը շուտով մաքիին մէջ աներևութացաւ։ Քիչ ատենէն երկու հօգի խեղճ զգեստներ հագած բայց աղէկ զինաւորած՝ ծառերու մէջէն դուրս ելան. կարծես թէ օձերու պէս սողալով յանգգաս տից առաջ եկեր էին։

— Օրս' Անտոն, բարի եկեր ես, ըսաւ աս երկուքէն աւելի տարեցը։ Ի՞նչ, չե՞ս ճանչնար զիս։

— Ձէ, ըսաւ Օրսոյ՝ ուշի ուշով երեսը նայելով։

— Նայէ մէկ մօրուք մը ու սրածայր գլխարկ մը ինչպէս կը փոխեն զմարդ։

Աղէկ նայէ ինծի, տեղակալդ . մոռցեր ես ուրեմն վաղէրուի ընկերներդ . միտքդ չիգար Պրանտոյ Սալէլլին, որ քովդ հրացան կը պարպէր այն դժբաղդ օրը

— Դու ա՛ն ես : 1816ին չիախա՛ր զի նոտորութենէ :

— Այո . ձանձրացեր էի այն կեանքէն, և հոս գործ մը ունէի ընելու : Հա՛ հա՛, Քիլի, դու կտրիճ աղջիկ մըն ես . դուրս հանէ նայինք ունեցածներդ, որովհետեւ անօթի ենք : Չես կրնար մակաբերել, տեղակալդ, թէ ի՞նչ աստուածակ կ'ունենան մաքիին մէջ կեցողները : Ո՛վ է ասիկայ խրկողը մեզի, Ալաւնին թէ գեղապետը :

— Չէ, պատասխանեց Քիլի . ջաղաց պան կինը տուաւ :

— Ի՞նչ կ'ուզէ ինծմէ :

— Կ'ըսէ թէ իր երկիրը հերկող Լուգ դացիները սկսեր են հիմա 35 փող և շագանակ ուզել իրմէն օրը՝ Բիէզրանէրայի ջերմին պատճառաւ :

— Պարապորդները . ինչ և իցէ, տես նա՛նք : — Առանց քաղաքավարութեան խօսինք, կ'ուզես՝ տեղակալդ՝ մեր կերածէն ուտել :

— Շատ շնորհակալ եմ :

— Ժողովրդապետ, ըսաւ Պրանտոլաչիոյ ընկերոջը, սեղան նստէ :

— Ժողովրդապետ մի ըսեր, զուրցեց երկրորդ աւազակը . եկեղեցական պիտի ըլլայի, բայց չյաջողեցաւ :

— Ի՞նչ պատճառաւ ետ կեցար, հարցուց Օրսոյ :

— Ոչինչ բանի մը համար . գործ մը ընելու համար, ինչպէս որ ընկերս սովորութիւն ունի ըսելու : Բիզայէն ելայ եկայ որ քոյրս կարգեմ . բայց փեսան հասնելէս իրեք օր առաջ տենդէ մը մեռեր էր : Ա՛ն ատեն մեռնողին եղբօրն առաջարկեցի . ըսին որ կարգուած էր . աս բանիս վրայ չփոխեցայ :

— Իրաւ ձախտող պարագայ մըն է : Ի՞նչ ըրիր :

— Գնտակ մը պարպեցի գլխուն, պաւ տախտանեց աւազակը պաղ արեամբ :

Օրսոյի ոսկրները դող ելան, բայց

հետաքրքրութենէն շարժած ուզեց խօսակցութիւնը առաջ տանիլ այս երկուքին հետ, որոնց իւրաքանչիւրը՝ գոնէ մէկ մարդասպանութեամբ մը ծանրացուցած էր խիղճը :

Ընկերոջը խօսած միջոցը՝ Պրանտոլաչիոյ հաց և միս դրաւ դիմացը . ետքը ինքն ալ առաւ, նոյնպէս մաս հանեց իր Պրուսոյ շանը, որուն համար ըսաւ Օրսոյի թէ զարմանալի յարմարութիւն մը ունի զինուորները ճանշնալու՝ թէ պէտ և ծպտեալ ըլլան : Հուսկ յետոյ հացի կտոր մը ու քիչ մը երջիկ տուաւ եղբօր աղջրկանը :

— Երբոր տասնհինգ տարուան ըլլայ աս պզտիկն, ըսաւ Պրանտոլաչիոյ Օրսոյի, կը կարգեմ զինքը . արդէն աղէկ տեղ մը գտած եմ մօքիս մէջ :

— Դու պիտի ուզես իրեն փեսայ :

— Տարակոյս չկայ . ես թէ որ հարուստի մը ըսելու ըլլամ՝ թէ որդիդ Միքէլինա Սալէլլին հետ կարգէ, կարծես թէ կը տնտրնայ ու կը թողու որ ականջները քաշեմ :

— Ես խորհուրդ չեմ տար, ըսաւ միւս աւազակն . որովհետեւ ընկերոջս ձեռքը քիչ մը ծանր է, գիտէ ուզածն առաջ տանիլ :

— Թէ որ ես անզգամ՝ մարդ մը ըլլայի, շարունակեց Պրանտոլաչիոյ, բաւական էր որ մախաղս բանայի՝ հինգ ֆրանգնոցներ անձրևի պէս կը թափէին մէջը :

— Ըսել է որ մախաղիդ մէջ անանկ բան մը կայ, զուրցեց Օրսոյ, որ կը քաշէ զանոնք :

— Չէ . բայց թէ որ հարուստի մը գրելու ըլլամ (ինչպէս ուրիշները կ'ընեն) թէ հարիւր ֆրանգի պէտք ունիմ, մէկէն կը խրկէ : Բայց ես պատուաւոր մարդ եմ :

— Գիտես Օրսոյ, ըսաւ միւս աւազակը, որ անզգամ՝ մարդիկ մեր գիրը ձեացընելով՝ փոխանակագիրներ կը շինեն . որովհետեւ գիտեն թէ ի՞նչպէս մեր վրայ համարմունք ստանալ կու տանք ամենուն մեր անցագիրներովը (իւ հրացանը կը ցուցնէր) :

— Ի՞նչ փոխանակագիրներ :

— Վեց ամիս առաջ՝ Օրէցցայի կողմը կը պտրտէի . յանկարծ գեղացի մը սկըսաւ գալ գէպ 'ի ինծի, ու հեռուէն զըլուխը բանալով՝ ըսաւ . — Ա՛հ, պարոն ժողովրդապետ (միշտ ինծի այս անուը կու տան) ներէ ինծի . ժամանակ տուր . հիմկու հիմա 55 ֆրանգ միայն կըցայ ձեռք ձգել, հաւտա՝ ճշմարիտ կ'ըսեմ : Ես ապշած՝ — Ի՞նչ կ'ըսես, հարցուցի, 55 ֆրանգ : — Կ'ուզեմ ըսել 65, պատասխանեց : Բայց ուզածիդ պէս 100 ֆրանգ տալը կարողութենէս վեր է : — Ե՛ս քեզմէ 100 ֆրանգ կ'ուզեմ . եկուր նայէ որ չեմ ճանչնար քեզ : — Ա՛ն ա տեն ձեռքս աղտոտ նամակ մը տուաւ, որուն մէջ կը պատուիրուէր իրեն որ երթայ 100 ֆրանգ դնէ որոշուած տեղ մը, թէ որ չուզեր որ ճիողանդոյ Գասգրիգոնի (իմ անունն է) իր տունն այրէ և կովերն սպաննէ : Կիրքս ելաւ . մաւ նաւանդ որ նամակը ուղղադրութեան սխալներով լեցուն էր . ես ուղղադրութեան սխալ ընեմ, որ համալսարանին մէջ ամէն բանի մրցանակ կ'առնէի : Բարկութենէս անանկ ապտակ մը զարկի գեղացւոյն, որ ինկաւ երկու անգամ գլորեցաւ : — Դու զիս գոյի տեղ կը դնես, նայէ սա անզգամին . և ոտքովս ինչպէս որ պէտք էր հարուած մը տուի : Սիրտս քիչ մը բացուեցաւ . հարցուցի թէ երբ պիտի աանիս ստակն որոշուած տեղը : — Այսօր : — Գնա՛ գիր ուրեմն : Որոշուած տեղը մայր ծառ մըն էր . բերաւ ստակը, ծառին տակը թաղեց ու քովս եկաւ : Ես մօտերը պահուրտած էի . գեղացւոյն հետ վեց ժամ սպասեցի հոն . ձանձրութենէս կը մեռնէի, բայց թէ որ պէտք ըլլար՝ իրեք օր ալ կը կենայի : Վեց ժամէն վերջը՝ պատտիացի անզգամ վախառու մը երեցաւ . ան միջոցին որ ծռեցաւ ստակն առնելու, պարպեցի հրացանս, և անանկ աղէկ նշան առեր էի՝ որ զըլուխը հոգէն հանած ստրկին վրայ ինկաւ : — Ա՛ռ հիմա ստակդ, դարձայ ըսի գեղացւոյն, և միտքդ մի դնել որ ճիողանդոյ Գասգրիգոնի ցած մարդ է : — Խեղճուկը դողդըղալով ա-

ռաւ 65 ֆրանգը՝ առանց սրբելու մաքրելու զանոնք . շնորհակալ եղաւ ինծի, ես ալ ոտքի աղէկ հարուածով մը բարեւաութի, և գեռ կը վազէ :

— Ժողովրդապետ, ըսաւ Պրանտուլաչիոյ, սա հրացանի հարուածիդ կը նախանձիմ :

Ետքը ըսաւ Օրսոյի որ արեւ մայրը մտնալու վրայ էր . — Խորհուրդ կու տամ որ ալ չսպասեցրնես Աղաւնին . և աղէկ բան չէ որ արեւ մտնալէն վերջը ասանկ դուրսը պտրտիս : Ինչո՞ւ համար առանց հրացանի կ'ելլես . հոս մօտերս գէշ մարդիկ կան, զգուշացիր : Այսօր վախնալու բան չունիս . որովհետեւ Պարրիչինիներն իրենց տունը հրաւիրեցին դաւառապետը . ճամբուն վրայ հանդիպեցան իրեն, որ Գորդէ կ'երթար հիմնարկութեան մը առաջին քարը դնելու . ինչ և իցէ՛ սա գիշեր Պարրիչինիներուն քովը կը պառկի . բայց վաղը ազատ են : Վինչէն գէլլոյ ըսածդ անպիտան երիտասարդին մէկն է, Օսլանտուչիոն ալ անոր նըման . . . նայէ որ զատ զատ հանդիպիս անոնց, այսօր մէկուն, վաղը մէկալին . բայց զգոյշ կեցիր, ուրիշ բան չեմ կրընար ըսել :

— Շնորհակալ եմ խորհրդիդ, պատասխանեց Օրսոյ . բայց ես անոնց հետ բան դործ չունիմ բնաւ . ինչուան որ իրենք չգան զիս փնտրուելու, ես իրենց ըսելիք մը չունիմ :

Աւագակը լեզուն դուրս հանեց խաղցուց, բայց պատասխան չտուաւ : Երբոր Օրսոյ ոտքի վրայ ելաւ երթալու, — Աղէկ միտքս եկաւ, զուրցեց Պրանտուլաչիոյ, որ շնորհակալ ըլլամ վառօդին համար . աղէկ ժամանակին հասաւ : Հիմա բանի մը պէտք չունիմ . . . այսինքն կօշկի պէտք ունիմ . . . , բայց վայրի ոչխարի մը մորթէն կը չինեմ՝ սա օրերս :

Օրսոյ երկու հինգ ֆրանգնոց աւագակին ձեռքը խոթեց . — Վառօդը խըրկողը Աղաւնի էր, ըսաւ . իսկ ասով կօշիկդ կը գնես :

— Կոպտութիւն մի ըներ, աղաղակեց Պրանտուլաչիոյ՝ ստակը ետ տալով : Մուրացկան կը կարծես զիս . հաց

և վառօդ կ'ընդունիմ, բայց ուրիշ բան չէ :

— Կարծէի որ հին զինուորակիցք իրարու կրնան օգնել : Մնաս բարով :

Բայց երթալէն առաջ կամացուկ մը ստակն աւազակին մախաղին մէջ զըրաւ, առանց անոր իմանալուն :

— Երթաս բարով Օրս' Անտոն, զուրցեց միւս աւազակը . յուսանք որ նորէն կը տեսնուինք իրարու հետ :

Օրսոյ հեռացաւ անոնցմէ, և քառորդի մը չափ քալելէն վերջը՝ ետևէն մէկու մը սաստիկ վազելու ձայնը լսեց : Պրանտոլաչիոյ էր եկողը : — Ըրածդ շատ յանդգնութիւն է, շունչը կտրած ըսաւ Օրսոյի . սոսքու տասը Փրանզդ . ուրիշ մը ըրած ըլլար նէ՝ անպատիժ չէի անցըներ : Շատ բարեւ ըրէ Ալզանիի : Արիւն քրտինք մտնել տուիր ինծի : Գիշեր բարի :

Հետեւեալը գալ բերրով :

Բարիգոռ Նաքոյեռն լիկեռնը :

Յայտնի է որ անցեալ ամիս՝ ինչպէս մեր քանի մը ազգային վարժարանաց, այլ աւելի եւրոպացւոց զանազան աշխարհաց և քաղաքաց մէջ ուսանողաց քննութիւնք և պարգևաբաշխութիւնք եղած են, ըստ սովորութեան, հանճարեղ և յորդորական խօսքերով . մեր լսած և հանդիպածներուն մէջ ամենէն սրբտանց ազնիւ և ազգու երևցաւ Բարիգոռ նորընտիր արքեպիսկոպոսին խօսածն առ ուսանողս Նաքոյեռն լիկեռնին, այնպիսի բարձր գահակալի մը արժանաւոր լեզու, զգայուն լրջութեամբ, և կրնամք ըսել, բարակ ու սրբազան տիրութեան գունով մը, եթէ արդարեւ այնպէս երևայ մեր ընթերցողաց այլ, որոց, և մանաւանդ մերային ուսանողաց պիտանի և օգտելի սեպելով թարգմանեմք :

Պատանիք, պաշտօնեայն հասարակաց հրահանգութեան, ձեր հին ուսուցիչն, հաճեցաւ կանչել Բարիգոռ արքեպիսկոպոսը, ձեր հին հոգևոր հայրը,

որ գահազուլս նստի այսօրուան զմեզ հաւաքող հանդիսին : Անշուշտ ինքն միտածեր էր որ ախորժելի պիտի ըլլայ ինծի տեսնալ կրկին անգամ այս գեղեցիկ Նաքոյեռն լիկեռնը, որուն հետ երկուքնիս ալ վերաբերութիւն ունեցեր ենք, և ուր անցեր են մեր լաւագոյն օրերուն մէկ մասն, կը համարձակիմ ըսել, աշխատանքով և անձնանուիրութեամբ : Շնորհակալ եմ իրեն որ կրցաւ այսպէս աղէկ ըմբռնել իմ զգացմունքներս, և ինծի երջանկութիւն կը սեպեմ, սիրելիք իմ, այս պատեհաւս ապահովելու ձեզի իմ գողտր և խորին խնամքս, ձեր վարժապետներուն դիտութիւնը և ձեր հոգևոր հարց խոհական նախանձը դրուատելու համար, և զամենքն ալ խրախուսելու՝ որ պահեն իրենց եռանդուն ջանքը՝ զձեզ արժանի Գաղղիոյ և արժանի կրօնից ոճով մը զարգացընելու :

Ձեր անդրանիկներուն վրայ ես ալ քիչ մը հոգ տարած եմ, և անոնք ինծի սիրելի մնացած են . սրտովս իրենց ետևէն կ'երթամ այն ասպարէզին մէջ ուր իրենք գործունէաբար մտած են, և վստահ եմ որ Աստուած չի մերժեր իմ յիշատակս իրենց պահելն : Թողէք ինծի, որդեակք իմ, որ սրտիս գորովոյն մէջ ձեզի ալ անոնց քով տեղ մը բանամ, և ընդունեցէք իմ իղձերս՝ որովք կը փափագիմ ձեզ անդորր և յաջող բախտ մը ունենալ . և եթէ հակառակութիւնն ձեզի չխնայէ, գէթ կտրճութիւն և առաքինութիւն զձեզ չթողուն, և ամէն աւերակաց մէջ ալ բարձրագլուխ կանգնի բարոյական մեծութիւնն :

Արդարեւ ինչուան հիմա կեանքն ձեզի ծիծաղերես երևած է, և դուք պատանեկութեան անմեղ ուրախութիւններովը միայն կը ճանչնաք դեռ զանիկայ . բայց այդ կեանքը շուտով իր կերպը պիտի փոխէ և զձեզ պիտի մոցընէ հասուն մարդիկներու պահուած աշխատանայն մէջ : Ձեր ապրած տաննուհինգ տարիներուն ետևէն կը տեսնամ երկայն ապագայ մը՝ լի ծանր և խիստ վաստակներով, դժուարին մրցմամբք և ցաւալից